ISSN 1829-0469 22008 > 9 771829 046005
ISSN 1829-0469 22009 > 9 771829 046005
ISSN 1829-0469 22010 > 9 771829 046005
ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Երևանի Կոմիտասի անվան Պետական Կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

ԵՐԱԺՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (201-202-203) #9-10-11 սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր 2022

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՆՇՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 31-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Համերգ՝ նվիրված Լեւոն Չաուշյանի հիշատակին

4


Լևոն Չաուշյան

ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅՈՒՄ

Սանա Հովհաննիսյան, Ծովինար Մովսիսյան, Արամ Հովհաննիսյան, Չայներիզների նվիրում 1-ին կուրսի ուսանողներին

2

Հայաստանի կոմպոզիտորների միության 90-ամյակին



3

Թին Խուա Փնգի վարպետության դասերը

2

Թին Խուա Փնգ
Սոնա Հովհաննիսյան

Վահագն Դավթյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին

5


Վահագն Դավթյան

Артемий Айвазян

К юбилею Артемия Айвазяна

3

Доброта спасет мир

8

Эдуард Христофорович Едикиселов

ԳԻՏԵԼԻՔԻ ԵՒ ԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՐՈՐԻԱՅՈՒՄ

Այս տարին շատերիս համար յուրահատուկ էր՝ ավարտական քննություններ դպրոցում կամ քոլեջում, ընդունելություն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Եվ ահա, մենք Կոնսերվատորիայի առաջին կուրսի ուսանողներ ենք: Սպասումները մեծ են: Առաջնահերթ մասնագիտական հմտությունները զարգացնելու, ինչպես նաև երաժշտական այլ դասընթացների միջոցով ավելի լայն մտահորիզոն ձեռք բերելու առումով: Անշուշտ, առաջին կուրսեցիներիս համար սկսվում է կյանքի՝ ինչ-որ տեղ բարդ, բայց նաև նոր գիտելիքներ ստանալու շատ հետաքրքիր մի շրջան: Եվ այս նոր շրջանի մեկնարկը տրվեց սեպտեմբերի 1-ին, ԵՊԿ նախասրահում:

Միջոցառմանը ներկա էին ԵՊԿ ռեկտորատն ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, ԵՊԿ անցյալ տարվա շրջանավարտներն ու առաջին կուրսեցիները: Ընդունելությունն սկսվեց ԵՊԿ ռեկտորի ողջույնի խոսքով: Դիմելով առաջին կուրսեցիներին՝ ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանն ասաց. *«Ձեր մասնագիտական որակով, բարեվարքությամբ, քաղաքավարությամբ դուք այսօրվանից ներկայացնում եք Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Ճանաչեք ավանդույթները և արեք ավանդույթի հաջորդ քայլը»:*

Սոնա Հովհաննիսյան, ԵՊԿ ուսանողներ

Օլյա Նուրիջանյան, ԵՊԿ ուսանողներ



ԵՊԿ ուսանողներ

Այնուհետև, ուսանողներին բաժանեցին եվրոպական ուսանողական օրհներգի՝ *«Gaudeamus»-ի* նոտաները և ուսանողական առօրյայի մեկնարկը տրվեց օրհներգի կատարմամբ:

Առաջին կուրսեցիներին ողջունեցին նաև ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը և ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը: Ծովինար Մովսիսյանը մաղթեց, որ ոգևորությունը չլքի առաջին կուրսեցիներին հետագա ուսման տարիներին և նրանք լինեն նախաձեռնող, ստեղծեն այն մթնոլորտը, որտեղ կուզեն ապրել ու սովորել: Իսկ Արամ Հովհաննիսյանը նշեց, որ ուրախ է առաջին կուրսում տեսնել տաղանդավոր և մեծ ներուժով ուսանողների:

Սիմվոլիկ էր 2021-2022 ուսումնական տարվա լավագույն շրջանավարտներին իրենց կատարումներով ձայներիզների հանձնման արարողությունը և այն, որ միջոցառման ընթացքում նախասրահում հնչում էր նոր ձայնասկավառակի ձայնագրությունը:

Սեպտեմբերի 7-ին կայացավ ռեկտորի հանդիպումը 1-ին կուրսի ուսանողների հետ, որին մասնակցեցին նաև ուսումնական և գիտական գծով պրոռեկտորները, ուսումնական մասի վարիչ՝ Նոնա Ոսկանյանը, Որակի ապահովման բաժնի ղեկավար՝ Նարինե Ավետիսյանը և այլք: Հանդիպմանը ներկայացվեցին վարչական և ուսումնական գործընթացներին վերաբերող հարցեր, ինչպես նաև սիրով պատասխանեցին ուսանողության հետաքրքրող տարբեր հարցերին: Առանձնահատուկ նշվեց, որ կոնսերվատորիայում ուսումնական գործընթացին զուգահեռ, շատ կարևոր է համերգային, մրցութային, գիտական ու ստեղծագործական կյանքը:

Սկսվեց ուսանողական առօրյան:

ԵՍԹԵՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՊԿ Վոկալ-տեսական ամբիոնի խմբավարական բաժնի բակալավրական 1-ին կուրսի ուսանող, խմբավար

Թին Խուա Փնգի վարպետության դասերը

Վարպետության դասի մասնակիցները

Սերգեյ Քեչեկ, Թին Խուա Փնգ, Էդգար Մխիթարյան, Նաիրա Դանիելյան

Թին Խուա Փնգի վարպետության դասին


ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«Մեկնարկ»
Տաղանդի զարգացման նպատակային ծրագիր
ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՄԵՐԳ
10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թ.
ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՐԻԱՅԻ 4-ՐԴ ՀԱՐԿԻ ԴԱՀԼԻՃ
To Edgar:
How exciting your performance was!
Keep the up
ՄԱՍՆԱԳԵՏ
ԴՈԿՏՈՐ ՓՆԳ
(ՄԱԼԱՅԶԻԱ)
ՄԵԿՆԱՐԿ ԾՐԱԳՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ԱՐՄԵՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ
10 Sep 2022
ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ
ՍԵՐԳԵՅ ՔԵՉԵԿ
Սկիզբը ժ. 16:00

Թին Խուա Փնգի վարպետության դասին

Երեք օր շարունակ, սեպտեմբերի 6-9 Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 4-րդ հարկի դահլիճում կայացել է վարպետության դասերի շարք Մալայզիայի *UCSI* երաժշտական համալսարանի դեկան, պրոֆեսոր, դաշնակահար Թին Խուա Փնգի հետ: Վարպետության դասերի շարքը կազմակերպվել է «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի (ղեկավար՝ ԵՊԿ պրոֆեսոր, դաշնակահար Արմեն Բաբախանյան)՝ «Վարպետության դասեր արտերկրյա առաջատար մասնագետների հետ» նախագծի շրջանակներում:

Անմիջական, անկաշկանդ մթնոլորտ, անսպառ էներգիա, հետաքրքիր ինտերպրետացիաներ ու մոտեցումներ, դրական լիցքեր, և այդ ամենը համեմված հումորով ու յուրահատուկ արտիստիզմով՝ ահա ինչպես կարելի է բնութագրել Թին Խուա Փնգի աշխատելաոճը:

Վարպետության դասերին մասնակցեցին ինչպես «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամները, ովքեր տարբեր միջազգային մրցույթների դափնեկիրներ են՝ Արթուր Գրիգորյան, Էլեն Խաչիկյան, Սվետլանա Հակոբյան, Էդգար Մխիթարյան, Աիդա Ավանեսյան, Հայկ Ջուլիակյան, այնպես էլ տարբեր երաժշտական դպրոցների աշակերտներ և ԵՊԿ ուսանողներ:

Հարկ է նշել, որ վարպետության դասերի ամբողջ ընթացքում ներկա էին գտնվել դաշնակահարներ՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ պրոֆեսոր Սերգեյ Քեչեկը և ԵՊԿ դասախոս Մարինե Մարգարյանը, ով անհրաժեշտության դեպքում թարգմանում էր անգլերեն լեզվին չտիրապետող երեխաների համար:

Վարպետության դասերի շարքը Թին Խուա Փնգի հետ եզրափակվեց հրաշալի համերգով, որը կայացավ ԵՊԿ-ում սեպտեմբերի 10-ին: Համերգի վերջում պրոֆեսոր Փնգը խոստովանեց, որ տպավորված է երեխաների պատրաստվածությամբ և պատգամեց միշտ հիշել, որ թեպետ լավ դաշնակահար լինելը կարևոր է, սակայն կան ավելի առաջնային արժեքներ: *«Այսպիսով, - եզրափակեց նա, - առաջնայինը լավ Մարդ լինելն է, երկրորդը՝ երաժշտություն լսելու ունակության տիրապետելը, և միայն դրանից հետո կարելի է խոսել լավ դաշնակահար լինելու մասին»:*

ԵԼԵՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
դաշնակահար

К юбилею Артемия Айвазяна

К 110–летию джазового композитора, дирижера, виолончелиста, создателя и руководителя Государственного эстрадного оркестра Армении, Народного артиста Армянской ССР Артемия Айвазяна предлагаем вниманию читателей письмо композитора к музыковеду Мее Кацахян, переданное в Институт искусств НАН Армении композитором Софой Азнаурян.

***

Приветствую Вас, Мея, и попытаюсь в этом письме изложить, то, что, очевидно, Вам нужно. Мне сообщили, что Вам поручена статья обо мне для газеты (или журнала) АОКСА.

Если это так, то Вам очевидно нужны сведения обо мне и моем творчестве.

Хочу заранее оговорить, без всякого стеснения (я, наконец, понял, что в этих случаях некоторые мои коллеги меньше всего склонны стесняться) итак, хочу оговорить следующее: я могу лишь указать кое–какие биографические данные и названия моих произведений.

Однако такого рода статья обо мне, не говорящая ни о моей роли в музыкальном искусстве Армении, ни о моих профессиональных достоинствах, конечно, не только не способна вызвать во мне умиления, но и не даст ничего ясного зарубежным читателям.

Короче говоря, меня уже в вполне достаточной степени замалчивали. Сейчас Вы имеете все основания заговорить обо мне ясно и определенно. Тем более, что в силу некоторых причин мои друзья–композиторы, ныне стали меня ценить.

Теперь пару слов о себе: родился я в 1902 году в городе Баку, где окончил музучилище и гимназию. Переехав в Тбилиси поступил в консерваторию и окончил ее в 1922 году по классу профессора К. Миньяра (тогда я был еще виолончелистом). Однако, и тогда уже чувствовал влечение к занятиям по композиции.

С 1923 года стал преподавателем Ереванской консерватории по классу виолончели. Приехал в Армению А. А. Спендиаров, который стал моим учителем по композиции и близким другом. Проживал он долгое время в моей комнате со мной, в переулке, напротив 2–й бани (улица Советов). Вместе с ним я принимал деятельное участие в организации первого симфонического оркестра Армении. Оркестр часто выступал. Часто Спендиаров аккомпанировал на рояле мне виолончелисту, выступавшему на концертах.

Громадную пользу почерпнул я, как композитор, от занятой с таким блестящим мастером, как Александр Афанасьевич. Однако вскоре мы все понесли тяжелую утрату. Спендиаров скончался. Я стал директором и педагогом Ленинаканской музстудии (отец Ваш работал в Наробразе). В 1930 году я уехал в Москву, где вновь поступил в консерваторию (меня приняли на последний курс), окончил ее и окончил там же аспирантуру. Долго концертировал, попутно сочиняя. Большой популярностью пользовались тогда мои трижды изданные в Москве виолончельные пьесы "Армянский танец" и "Грузинский танец". В 1937 году была поставлена оперным театром Еревана моя комическая опера "Тапарникос". В ней принимали участие многие большие артисты и в их числе Айкануш Даниелян, Павел Лисициан и т. д., опера шла два года с большим успехом.

С. Меликян, А. Спендиаров, А. Адамян, А. Айвазян; Д. Согомонян, О. Тер–Григорян, О. Оганезов, М. Мирзаян. 1924

Государственный джаз–оркестр Армении, 1947

С 1938 года я стал худруком армянского джаза, в успех которого никто не верил. Однако, жизнь показала абсолютно обратное, ибо трудно описать ту огромную популярность, которую приобрел этот коллектив во всем Советском Союзе.

Не осталось города, где бы мы не побывали. В 1942 году и позже в 1943 году мы были в Иране с концертами. Это была поистине триумфальная поездка. Репертуар был колоритный, национальный, не похожий на обычные джазы. Все это создавалось с огромным трудом, ибо традиций национальной эстрады не было. Я впервые ввел национальную эстрадную песню. Ну, Вы знаете, что песен у меня много. Их по сей день поют во всех уголках Союза, и во многих странах мира: "Каринэ", "Караван", "Армения", "Родина", "Синеокая", "Джан Ереван" и много, много других.

Мною написан ряд оперетт, идущих в различный городах Союза: "Кач Назар", "Восточный дантист", "Счастливый день", "Ашуг Мурад", "Старая болезнь" и т.д.

Мною сочинены Две сюиты для симфонического оркестра, два струнных квартета (исполняют комитасовцы), концерт для виолончели, концерт для голоса, ряд новых виолончельных произведений. Написана музыка к фильмам: "Сердце матери", "О чем шумит река", "На больших дорогах", "Поэма об Армении" (в этом фильме есть песня "Ереван", которую на всех концертах поет Гоар Гаспарян, это следовало бы указать), фильм "Снежная королева", получивший Первую премию и золотую медаль на фестивале в Венеции в 1957 году.

Сейчас сочиняю для театра оперу "Кум Моргана" на сюжет Ширванзаде.

Мое фото, Мея, Вы можете получить через Милу 7–29–71.

Шлю сердечный привет,
А. Айвазян.

Подготовила к печати С. Азнаурян

Արաքսի Սարյանի ծննդյան 85-ամյակին

2022-ին լրանալու էր արժանահիշատակ երաժշտագետ, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության անդամ, ԵՊԿ պրոֆեսոր, երաժշտության պատմության ամբիոնի վարիչ Արաքսի Արծրունի Սարյանի ծննդյան 85-ամյա հոբելյանը: Իր բազմաբեղուն գործունեության արդյունքում Ա. Սարյանն արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչմանը, նաև Ազգային ժողովի պատվավոր մեդալակիր էր: Նա հավասարապես նվիրել էր իրեն և՛ մանկավարժական գործունեությանը, և՛ երաժշտագիտությանը: Որպես մանկավարժ, գիտնական և հասարակական գործիչ Ա. Սարյանն աշխատեց շուրջ 50 տարի՝ սկզբից Տ. Չուխաջյանի, Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցներում, այնուհետև Ռադիոկոմիտեում, ՀՀ գիտությունների ակադեմիայում և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Երկար տարիներ հանդես եկավ որպես ՀՀ պետական մրցանակի հանձնաժողովի ղեկավար՝ երաժշտական արվեստի բնագավառում:

Ապագա երաժշտագետը ծնվել է 1937-ին, Լենինականում (այժմ Գյումրի)՝ տեղի դրամատիկական թատրոնի տնօրեն, դերասան Արծրուն Հարությունյանի ընտանիքում: Գերազանց ավարտելով Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը, նա 1955-ին ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ: Սակայն առաջին կուրսը գերազանց ավարտելուն պես, նա թողել է ուսումն ու 1956-ին ընդունվել ԵՊԿ-ի պատմատեսական բաժանմունքը: Լիակատար մասնագետ դառնալու գործում մեծ էր նրա ղեկավար՝ ակադեմիկոս գիտնական, կոմիտասագետ Ռոբերտ Աբայանի դերը: Իր ուսուցչի ճանապարհը շարունակելով, Ա. Սարյանն իր ուրույն հետքը թողեց հայ երաժշտության պատմության մեջ: Արաքսի Սարյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում էր, հայ երաժշտագիտության բնագավառում դեռևս չուսումնասիրված, հայ քաղաքային երգի ուսումնասիրությունը:

1965-ից, ավարտելով ասպիրանտուրան, Ա. Սարյանն անցնում է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատանքի՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1969-ից մինչև կյանքի վերջ դասավանդել է կոնսերվատորիայում երաժշտության պատմության դասընթացները:

Ա. Սարյանի գրչին են պատկանում 10 մենագրություն (այդ թվում նաև նվիրված իր ամուսնուն՝ մեծանուն կոմպոզիտոր Ղազարոս Սարյանին), մոտ 50 գիտական հոդված, գրքերի թարգմանություններ, մի շարք հրապարակումներ բազմաթիվ պարբերականներում, տեղի և միջազգային գիտաժողովների զեկույցներ և այն:

2015-ին Ա. Սարյանի դստեր՝ Սոֆյա Սարյանի և ԵՊԿ պրոֆեսոր Ա. Արևշատյանի ջանքերով կազմվեց մեծն երաժշտագետի «Հոդվածներ, զեկուցումներ, հաղորդումներ» ժողովածուն:

Ա. Սարյանը հետաքրքիր էր, կրթված, բազմակողմանի զարգացած, հիանալի տիրապետում էր բանավոր խոսքի, բայց և այդքան արժանիքների հետ մեկտեղ շատ համեստ, բարեհամբույր և սիրալիր էր բոլորի նկատմամբ:

Հիշատակդ վառ լինի, մեծատառով երաժշտագետ և անմոռանալի Ուսուցիչ:

ՄԱՐԻԱ ՂԱՐԱԲԵԿՅԱՆ
երաժշտագետ

Հայաստանի կոմպոզիտորների միության 90-ամյակին

Այս տարի նշվում է Հայաստանի կոմպոզիտորների միության 90-ամյակը: Այս առիթով մեր զրուցակիցն է ճանաչված կոմպոզիտոր և խմբավար Կոնստանտին Պետրոսյանը, որը ներկայում հանդիսանում է Հայաստանի կոմպոզիտորների միության արտասահմանյան հանձնաժողովի համանախագահ: Մենք խնդրեցինք Պարոն Պետրոսյանին պատասխանել մի քանի հարցերի:

- Սիրելի Մաեստրո, Ձեր կարծիքը Հայաստանի կոմպոզիտորների միության 90-ամյակի մասին, հայկական կոմպոզիտորական արվեստի կարևորության, նրա ձերքբերումների և նպատակների մասին:

- Այո, այս տարի հոբելյանական տարի է Հայաստանի կոմպոզիտորների միության համար: Այն հիմնադրվել է Երևանում 1932 թ. մայիսին, իսկ արդեն հունիսին կայացել է առաջին նիստը: Անցած տարիներին բազմաթիվ հայ կոմպոզիտորներ և երաժշտագետներ դարձան Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ: Մեր ժողովրդին քաջ հայտնի են հայ մեծ կոմպոզիտորների անունները, սկսած Ա. Սպենդիարյանից, Ռ. Մելիքյանից, Ա. Խաչատուրյանից մինչև մեր օրերը: Հայ կոմպոզիտորներն իրենց ստեղծած բազմաթիվ ստեղծագործություններով, տարբեր ժանրերում (օպերաներ, բալետներ, սիմֆոնիաներ, օրատորիաներ, կանտատներ, խմբերգային և գործիքային, վոկալ ստեղծագործություններ) գրավեցին իրենց պատվարժան տեղը համաշխարային երաժշտական արվեստում: Հայ կոմպոզիտորական արվեստը շատ բարձր է գնահատվում աշխարհում, հայ կոմպոզիտորների գործերը հնչում են աշխարհի բազմաթիվ բեմահարթակներից, փառատոներում, դարձել են համաշխարային երաժշտական արվեստի կարևոր մասը:

Այս հոդվածում հնարհավոր չի նշել վառ անուններ, քանի որ շատ-շատ են: Բայց, անկասկած, հայ, և ոչ միայն հայ, ժողովուրդը մեծ պարծանքի իրավասություն ունի մեր կոմպոզիտորների ստեղծած երաժշտական կոթողների շնորհիվ: Նշենք նաև մեր հիանալի երաժշտագետների գիտական և հասարակական գործունեությունը, հայ կոմպոզիտորների գործերի ուսումնասիրությունը, լայն հասարակայնությանը ներկայացնելով այն:

ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԼԵՎՈՆ ՉԱՈՒՇՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1 Նոյեմբերի 22-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացավ համերգ՝ նվիրված Հայկական երաժշտական համագումարի հիմնադիր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Լևոն Չաուշյանի հիշատակին: Նրա դուստրը՝ դաշնակահարուհի Անահիտ Չաուշյանը (Մեծ Բրիտանիա), ներկայացրեց հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Լևոն Չաուշյանը հայ ականավոր կոմպոզիտոր է, վաստակաշատ մանկավարժ, երաժշտահասարակական գործիչ, ով ծնվելով երաժիշտների ընտանիքում ստեղծագործել սկսել է 11 տարեկանից: Լևոն Ալեքսանդրի Չաուշյանը ծնվել է 1946 թ. մայիսի 10-ին, Երևանում: 1954-1962 թթ. սովորել է Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, 1964-1973 թթ.՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական (պրոֆեսոր՝ Էդվարդ Միրզոյան) և դաշնամուրային (պրոֆեսոր՝ Գեորգի Սարաջև) բաժիններում:

Անվերջ կարելի է խոսել կոմպոզիտորի հայ կոմպոզիտորական և մանկավարժական ոլորտում ունեցած դերի ու ավանդի մասին: 1970-2000 թթ. աշխատել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, դասավանդելով մասնագիտական դաշնամուրի բաժնում: 1972-ից դասավանդել է ԵՊԿ խմբավարական, իսկ 2000-ից՝ ստեղծագործական ամբիոնում: 1979-1986 թթ. եղել է Կոմպոզիտորների միության Քարտուղարության անդամ, 1986-1991 թթ.՝ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահի տեղակալ:

1995-2000 թթ. աշխատել է Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբին կից Սիմֆոնիկ երաժշտության կենտրոնում՝ որպես նախագահ: 1994-ից եղել է Հայկական երաժշտական համաժողովի հիմնադիր-նախագահը: 2008 թ. արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման, 2017թ. պարգևատրվել է Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալով: Սիմֆոնիկ, գործիքային կոնցերտների, լարային կվարտետների, կամերային-անսամբլային, խմբերգային երկերի և գործիքային այլ ստեղծագործությունների հեղինակ է: 1969 թ. Համամիութենական մրցույթում կոմպոզիտորն իր «Սիմֆոնիկ պոեմ» ստեղծագործությամբ արժանացել է երկրորդ մրցանակի և դափնեկրի կոչմանը: 1974 թ. արժանացել է Պետական երիտասարդական մրցանակի: 1983 թ. Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոմպոզիտորների 30-րդ միջազգային տրիբունայում հեղինակի երրորդ լարային Կվարտետն ընդգրկվել է տարվա 12 լավագույն ստեղծագործությունների ցանկում: 1985 թ. հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ ստեղծագործությունների մրցույթում Լ. Չաուշյանի «Անհայտ զինվորին» սիմֆոնիան արժանացել է առաջին մրցանակի:

Ցավոք սրտի, կոմպոզիտորի ստեղծագործական ուղին կիսատ մնաց նրա 2022 թ., փետրվարի 18-ին՝ նրա վաղաժամ կյանքից հեռանալու պատճառով: Լևոն Չաուշյանի ստեղծագործական ուղին շարունակում են նրա ընտանիքի անդամները, աշակերտները, որոնց ներդրումը մեծ է հայ ժամանակակից կոմպոզիտորական դպրոցի նվաճումներում և Երևանի Կոմիատասի անվան պետական կոնսերվատորիայի ձեռքբերումներում:

Ինչպես նշեցինք, նոյեմբերի 22-ին, Արամ Խաչատրյանի անվան ֆիլարմոնիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ կամերային երաժշտության համերգ՝ նվիրված Լևոն Չաուշյանի հիշատակին, որպես մենակատար հանդես եկավ կոմպոզիտորի դուստրը՝ Անահիտ Չաուշյանը: Անահիտ Չաուշյանը ծնվել է Երևանում: Ավարտել է Երևանի Կոմիտաս անվան կոնսերվատորիան (պրոֆեսոր Վիլլի Սարգսյանի դասարան): Կատարելագործվել է Բրյուսելի *Conservatoire Royal*-ում՝ պրոֆեսոր Եվգենի Մոգիլևսկու ղեկավարությամբ և Լոնդոնի *Royal Academy of Music*-ում՝ պրոֆեսոր Պասկալ Նեմիրովսկու ղեկավարությամբ: Արժանացել է *Accademia Chigianain Siena*-ի Պատվո դիպլոմին: Բելգիայի *Emmanuel Durlet* դաշնամուրային մրցույթի դափնեկիր է: Մասնակցել է Պաուլ Բադուրա-Սկոդայի, Միշել Կամպանելլայի, Լազար Բերմանի, Լեվ Նաումովի և Սթիվըն Հաֆի վարպետության դասընթացներին:

Մենահամերգներով և կամերային անսամբլների կազմում ելույթներ է ունեցել հեղինակավոր համերգասրահներում *(Wigmore Hall*, *Royal Festival Hall*, *St. Martin-in-the-Fields*, *Տոկիոյի Santori Hall*, *Բրյուսելի Grande Salle du Conservatoire Royal*, *Փարիզի Gavot Hall* և այլ սրահներ): Որպես մենակատար ելույթներ է ունեցել *London Soloists Orchestra*, Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի և այլ սիմֆոնիկ և կամերային նվագախմբերի հետ (կատարել է Վ. Ա. Մոցարտի, Լ. վ. Բեթհովենի, Մ. Ռավելի, Ս. Ռախմանինովի, Ա. Խաչատրյանի և այլոց Կոնցերտներ): Ա. Չաուշյանը միջազգային փառատոների մասնակից է *(Farley Music Festival*, *Cheltenham Festival*, *Blackthorpe Barn Festival*, *Newbury Festival* և այլ փառատոներ): Հիմնադրել է *Fugata Quintet*-ը (Մեծ Բրիտանիա): Եղել է միջազգային մի շարք մրցույթների հանձնախմբի անդամ:

Համերգն ի սկզբանե նախատեսված էր Երևանյան 14-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում, սակայն սեպտեմբերին Հայաստանի սահմանին տեղի ունեցած իրադարձությունների պատճառով այն որոշ ժամանակով հետաձգվեց:

Համերգի ընթացքում հնչեցին Կոմիտասի «Շորոր», Ռուբեն Սարգսյանի «Նվիրում Կոմիտասին», Գեղունի Չթչյանի «Հայկական Խորաքանդակներ», Վաչե Շարաֆյանի «Անտեսանելի կապույտ թիթեռնիկների ձայները», Գայանե Չեբոտարյանի «Պրելյուդներ», Լևոն Չաուշյանի «Urbi et orbi» և Sonata N1 ստեղծագործությունները:

Ենթադրում ենք, որ լարվածությունը և հուզմունքը, որը կապված էր կոմպոզիտորի վաղաժամ մահվան հետ խանգարեցին, որպեսզի մենակատարը ըստ արժանվույն ներկայանա, որը երևում էր հնչող սրեղծագործությունների ոչ սահուն կատարմամբ, կոպիտ և հաճախ ոչ տեղին ցայտուն հնչերանգով: Հուզմունքն այնքան մեծ էր, որ տպավորություն էր ստեղծում, որ կոմպոզիտորի դուստրը կատարված նյութին այնքան էլ լավ չի տիրապետում, քանի որ շարունակ կամ նոտային էր նայում կամ էլ մատներին: Կարծում ենք, որ ելույթն այնքան էլ համոզիչ չէր, քանի որ չկար այն ազատությունը, որը արտիստը պետք է ունենա համերգի ժամանակ իր հարազատ գործիքի հետ շփման ընթացքում:

Չնայած համերգի ընթացքին, մենք կարծում ենք, որ Լևոն Չաուշյանի դերը և ներդրումն այնքան մեծ է հայ ժամանակակից կոմպոզիտորական դպրոցում, որ կցանկանայինք, որպեսզի նրա հիշատակին նվիրված համերգները շարունակական բնույթ կրեին մեկ բեմում միավորելով բազում արտիստների, որոնք բարձր կպահեն կոմպոզիտորի տարիների աշխատանքը:

Խմբագրական

Հայաստանի կոմպոզիտորների միության 90-ամյակին

3 -Գիտենք, որ Դուք մի քանի տարի ղեկավարել եք Հայաստանի կոմպոզիտորների միության Երաժշտական Կենտրոնը, իսկ այժմ ներկայացնում եք Հայաստանի կոմպոզիտորների միությունը, որպես արտասահմանյան հանձնաժողովի համանախագահ: Ի՞նչ կասեիք Ձեր գործունեության մասին:

- 1985-ից մինչև 1990-ը ղեկավարել եմ Հայաստանի կոմպոզիտորների միության Երաժշտական կենտրոնը և իմ գործընկերների հետ փորձել ենք անել լավագույնը հայ կոմպոզիտորների գործերի տարածման, կատարման, հրատարակման համար: Պետք է խոստովանեմ, որ այն ժամանակ կար կոմպոզիտորների միության հստակ պետական ֆինանսավորում, որի շնորհիվ մենք կարողանում էինք կազմակերպել համերգներ և փառատոներ ոչ միայն Հայաստանում, այլ նաև տարբեր արտերկրներում: Հիշում եմ մեր կազմակերպած ժամանակակից հայ կոմպոզիտորների փառատոները Հայաստանի հեռավոր շրջաններում, Ղափանում, Սիսիանում, Ստեփանավանում և այլուր, որոնցում մասնակցում էին շատ կոմպոզիտորներ և կատարողներ, ավանդական դարձած հայ ժամանակակից կամերային երաժշտության փառատոները Կոմիտասի անվան կամերային տանը, բազմաթիվ հեղինակային համերգներ, որոնցում հնչում էին հայ կոմպոզիտորների գործերը: Կոմպոզիտորների միությունն ուներ իրեն թողարկման հատուկ ժամերը Հայաստանի հեռուստատեսությամբ և այլն: Հետո եղան 90 –ականների դժվարին տարիները, և պետք է ազնվորեն խոստովանել, որ հայկական արվեստը տարբեր ոլորտներում միանգամից հայտվեց ճգնաժամային իրավիճակում, կրճատվեց, կամ լրիվ վերացվեց արվեստի բնագավառի պետական ֆինանսային աջակցությունը, առանց որի հնարավոր չէր գոյատևել և զարգանալ: Բայց, ի պատիվ մեր արվեստագետների, այդ դժվարին տարիներին նրանք կարողացան շարունակել իրեց գործունեությունը մշակութային և ստեղծագործական ոլորտներում, հաղթահարեցին դժվարությունները և շարունակեցին իրենց առաքելությունը:

- Կուզեինք անդրադառնալ Ձեր ներկա գործունեությանը Հայաստանի կոմպոզիտորների միությունում:

- 2014-ին, երբ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ ընտրվեց ճանանչված կոմպոզիտոր Արամ Սաթյանն ինձ և Լևոն Չաուշյանին առաջարկվեց ստանձնել արտասահմանյան հանձնաժողովի համանախագահների պարտականությունները: Մշակվեցին արտերկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում (իմ պարագայում) ծրագրեր կազմակերպելու և անցկացնելու տարբեր միջոցառումներ: Նույն թվականի հոկտեմբեր – դեկտեմբեր ամիսներին Բոստոնում, Պրովիդենսում և Նյու-Յորքում առաջին անգամ կայացավ հայ ժամանակակից կոմպոզիտորների կամերային երաժշտության փառատոն, որտեղ առաջին անգամ հնչեցին 15 հայ կոմպոզիտորների գործերը, և որոնք արժանացան ունկնդրի մեծ ուշադրության: Այնուհետև Բոստոնի Հայկական թանգարանի հետ համատեղ մի քանի տարի կազմակերպվեցին հայ կոմպոզիտորների երաժշտության համերգների շարք, այդ թվում «Բոստոնիան» վոկալ անսամբլի հիասքանչ երգային համերգը, որտեղ մենակատարները, չլինելով հայ, հայերենով կատարեցին երկու տասնյակ հայ կոմպոզիտորների երգերը, սկսած Կոմիտասից, Եկմալյանից մինչև այսօրվա հեղինակները: Այդ համերգը կրկնվեց Պրովիդենսում, ՕԿարահանվեց և ներկայացվեց հեռուստատեսությամբ լայն հասարակությանը: Հիշատակեմ Ա. Աճեմյանին և Խ. Ավետիսյանին նվիրված հեղինակային համերգները և շատ ուրիշներ: Հայոց Ցեղասպանության 100–ամյակին նվիրված՝ Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ, համերգներ կազմակերպեցինք Բոստոնում, Պրովիդենսում, Նյու-Յորքում, Մասաչուսեթս նահանգի տարբեր քաղաքներում:

Մեր նախաձեռնությամբ, Կանադահայերի կողմից ցույց տված դրամական աջակցության շնորհիվ Հայաստանի կոմպոզիտորների միությանը, կարողացանք հրատակել մի շարք հայ կոմպոզիտորների ձեռնարկներ: Պրովիդենսի հայկական եկեղեցու մշակույթային կոմիտեի աջակցությամբ «Հայկակա մշակութային ժամ» խորագրով, առցանց, պարբերաբար ներկայացվում են հայ կոմպոզիտորների ստեղծագործական համերգների տեսանյութերը և նաև նրանց գործերի կատարումները ամերիկյան երաժիշտների կողմից: Ծրագրերը մեծ են, մեծ է նաև մարդկանց հետաքրքրությունը դեպի հայ ժամանակակից երաժշտությունը:

- Ի՞նչ կասեիք Հայաստանի կոմպոզիտորների միության համերգային դահլիճի և Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տան մասին:

- Վերջին մի քանի տարիներին Հայաստանի կոմպոզիտորների միության և, հատկապես, նրա նախագահ՝ կոմպոզիտոր Արամ Սաթյանի կողմից մեծ ուշադրություն է դարձվում այս երկու մշակութային կենտրոններին: Վերանորոգման աշխատանքներ են ընթանում կոմպոզիտորների տան դահլիճում, որտեղ 1969 թ. տեղադրված է առաջին երգեհոնը Հայաստանում և որտեղ զետեղված է մեծ Մ. Սարյանի «Հայաստան» պանոն:

Վերջերս մի քանի հիասքանչ համերգներ տեղի ունեցան այնտեղ, մասնավորապես հայ կոմպոզիտորների գործերից բաղկացած: Կան բազմաթիվ ծրագրեր այդ դահլիճն ակտիվ գործելու վերանորոգումից հետո:

Ինչ վերաբերվում է Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տանը, որը վերջերս անվանվեց նրա հիմնադիր էդվարդ Միրզոյանի անունով, այսօր նա վերելք է ապրում տարիների անգործությունից հետո: Պետք է խոստովանել, որ կային մի քանի գայթակղիչ առաջարկներ վաճառել կոմպոզիտորների ստեղծագործական տունը պատկառելի գումարներով, բայց հանձինս ներկա միության ղեկավարությանը, և հատկապես նրա ներկա նախագահի, այդ բոլոր առաջարկները վերջնականապես մերժվեցին, և Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տունը մնաց ծառայելու հայ կոմպոզիտորներին և երաժշտագետներին: Այժմ կապիտալ վերանորոգվում են բոլոր առանձնատները, վերանորոգված է Բեթհովենի անվան համերգային դահլիճը, որտեղ անց են կացվում համերգներ, տարբեր միջոցառումներ: Դիլիջանի ստեղծագործական տունը նորից վերատևում է և ավելի պիտի շենանա մոտ ապագայում:

Կոնստանտին Պետրոսյան

Չեմ կարող չնշել հատկապես Հայաստանի կոմպոզիտորների միության կառուցվածքային այժմյան գործունեության մասին: Երկար տարիների դադարից հետո վերականգնվել է և ակտիվ գործում է միության երիտասարդական մասնաճյուղը, որը հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից համերգներ է կազմակերպում հատկապես դպրոցներում: Հարկ է նշել, որ վերջերս ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ հնարավոր եղավ կնքել համագործակցության հուշագիր Հայաստանի կոմպոզիտորների միության և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի միջև, որի շնորհիվ առաջին անգամ կատարվեցին 7 երիտասարդ հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ ստեղծագործությունները: Այդ գործունեությունը դեռ նոր է ստեղծված, և շարունակական է: Այդպիսի համագործակցություն ստեղծվում է նաև այլ նվագախմբերի և երգչախմբերի հետ:

Նշենք, նաև որ օրերս մի խումբ հայ կոմպոզիտորներ համերգներով հանդես եկան Արցախում, Սյունիքում և Տավուշի շրջանի սահմանամերձ գյուղերում, հանդիպեցին տեղի բնակիչներին, աջակցություն ցուցաբերեցին տեղի երաժշտական օջախներին, նվիրելով հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված ձերնարկներ:

Կարելի է ասել, որ Հայաստանի կոմպոզիտորների միությունն այսօր ապրում է լիակատար ստեղծագործական կյանքով: Աջակցենք նրան և մաղթենք Հայաստանի կոմպոզիտորների միության բոլոր անդամներին նոր ստեղծագործական մեծ հաջողություններ:

Տառադարձվել է արևմտահայերենից
«Պայքար» թերթում տպագրված 11. 9 2022
հարցազրույցը՝ կոմպոզիտոր, ՀԿՄ արտասահմանյան
հանձնաժողովի համանախագահ
ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ հետ

Վահագն Դավթյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին

***

«Կորուստների մի ծանր բեռով ես մտա կյանքի ու գրականության մեջ: Կորցրել էի մարդու համար թերևս ամենանվիրական արժեքը՝ ծննդավայրս՝ Եփրատի վտակներից մեկի՝ Ոսկեգետակի վրա ծվարած Արաբկիր աքանչելի գյուղաքաղաքը: Հավանաբար, հենց այդ օրերից է մեջս սկսել մղկտալ ծննդավայրի ու հայրենի տան կարոտը»:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

1 2022-ի օգոստոսի 15-ին լրացավ հայ բանաստեղծ, հրապարակախոս, թարգմանիչ, թատերագիր Վահագն Դավթյանի ծննդյան 100-ամյակը: Նա ծնվել է Արևմտյան Հայաստանի Արաբկիր գյուղաքաղաքում: Մոտ 4 տարեկան է եղել, երբ ծնողները գաղթել են Կրասնոդար: 1930-ականներին գաղթական արաբկիրցիները Երևանում հիմնում են նոր Արաբկիր թաղամաս: Այդ մասին իմանալով 1932-ին նրանք տեղափոխվում են Երևան: Դպրոցն ավարտելուց հետո Վահագն Դավթյանին ուղարկում են բանակ: Մասնակցում է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորում ստանում և վերադառնում տուն: 1948-ին ավարտում է ուսումը Երևանի Պետական Համալսարանում: Եղել է «Ավանգարդ» թերթի աշխատակից, «Գրական թերթ»-ի պատասխանատու քարտուղար, «Հայրենիքի ձայն» թերթի հիմնադիր-գլխավոր խմբագիր: 1991-1994 թթ. եղել է ՀԳՄ նախագահ:

Ստեղծագործությունները տպագրվել են 1935-ից: Նա հեղինակ է ավելի քան 40 բանաստեղծական ժողովածուների, գրական-հրապարակախոսական հոդվածների, 2 գրքի, մամուլում տպագրված մոտ 1000 հոդվածների և գրախոսությունների, էսսեների, հուշագրությունների:

Վահագն Դավթյանի անունով են կոչվում Երևանի թիվ 149 դպրոցը, Արաբկիրի այգին, որտեղ տեղադրված է նրա հուշարձանը: Արաբկիր վարչական շրջանում նրա անունով կա փողոց: Արժանացել է նաև բազում պետական մրցանակների, որոնց թվում՝ «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշան, «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշան, «Պատվո նշան» շքանշան, ԽՍՀՄ մշակույթի վաստակավոր գործչի կոչում, Հայաստանի պետական մրցանակի կրկնակի դափնեկիր և Չարենցի անվան մրցանակի դափնեկիր:

Օգոստոսի 15-ին, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀՀ ԳՄ աշխատակիցներ, արվեստագետներ, մտավորականներ և Վահագն Դավթյանի ընտանիքի անդամներ են այցելել Կոմիտասի անվան պանթեոն և ծաղիկներ խոնարհել մեծանուն գրողի շիրիմին: Նշվել է նաև, որ գրքի Երևանյան փառատոնի շրջանակներում տեղի կունենա հոբելյանական երեկո՝ նվիրված մեծանուն մտավորականի ծննդյան 100-ամյակին:

Իսկ հուլիսի 27-ին շրջանառության մեջ էր դրվել մեկ նամականիշ՝ նվիրված «Մեծանուն հայեր. Վահագն Դավթյանի ծննդյան 100-ամյակ» թեմային:

Նամականիշի վրա պատկերված է հայ մեծանուն բանաստեղծ Վահագն Դավթյանը և ներքևի հատվածում՝ «ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿ» գրառումը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:



Թողարկման օրը՝
27 հուլիսի 2022թ.
Դիզայնը՝
Ռեմ Սահակյանի
Տպարանը՝
Cartor, Ֆրանսիա
Չափսերը՝
30,0 x 40,0 մմ
Մեկ թերթի վրա՝ 10 հ.
Տպաքանակը՝
15 000 նմուշ

Վահագն Դավթյանի ստեղծագործությունները հավերժ են և մշտապես արդիական:

ՏԱԹԵՎԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երևանի պետական Ա.Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական քոլեջի 4-րդ կուրսի ուսանող, քանոնահար

ԵՌԱԳՈՒՅՆԸ ՇՈՒԵԻԻ ԲԵՐԴԻՆ

Եվ չտեսան, և չտեսան, նրանց աչքերն արնոտ ու կույր,
Որ դու Արցախ, ոչ թե մի բուռ, այլ բռունցք
ես պղնձակուռ:
Եվ չտեսան, և չտեսան, որ Դեր-Զորից այն հեռավոր,
Պատռած պատանքն իր ավազե, ելավ մանուկ
մի թևավոր,
Ելավ մանուկ մի հրաչյա, չքնաղ նման հրեշտակի,
Որ իր փոքրիկ բռունցքներով նախ երկնքի դուռը թակի,
Ապա մաքուր իր ձեռքերով առած
նշխարն արդարության,
Իջնի Արցախ շրթունքներին երգը, ոխի ու հարության.
Թրքաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

Եվ չտեսան, և չտեսան, որ դարձած լույս, դարձած ոգի,
Նորից Նժդեհն է արշավում, նման մի նոր Սուրբ Գևորգի,
Որ բոցերից Սումգայիթի ելնում աղջիկ մի սիրասուն,
Ելնում փխրուն ու բարալիկ, բայց և ահեղ,
որպես ցասում,
Որ ելնում են ամեն կողմից ֆիդայիներն այս ոգեղեն,
Դառնում անտես մի զորագունդ, թշնամու դեմ
դառնում գեհեն:
Եվ եռագույնն են ծածանում մեր հինավուրց
Շուշիի բերդին
Վրեժի շանթն աչքերի մեջ, վրեժի երգն իրենց շուրթին.
Թրքաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

Ներեք, տղերք, Ձեզ բոլորիդ ես չգիտեմ անուն-անուն,
Բայց շուրթերիս ամեն մեկիդ փառքի երգն
է հասունանում,
Լոկ քեզ գիտեմ, քեզ քա՛ջ Մոնթե, սակայն գիտեմ,
իբրև լեգենդ,
Գիտեմ, որ դու խոնարհ ու հեզ, բայց կռվի մեջ կրակ
ես խենթ:
Եվ քեզ գիտեմ, քա՛ջ Անդրանիկ, մաքրամաքուր
դու լույսի սյուն,
Դու անմարմին, որպես Հիսուս և էպոսի նոր դյուցազուն.
Երդումի պես Ձեր շուրթերին հնչեց նորից
երգն առնացի,
Որ երգն է սուրբ մեր քարեղեն ու ոգեղեն առեղծվածի,
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն..

Փա՛ռք քեզ Հայոց անմահ ոգի, փառք հառնումին
քո հիասքանչ,
Դու լույսի սերմ, ցայգածաղիկ, լեռան աղբյուր ու
հողի կանչ,
Ծիրանի ծառ դու ծաղկավոր ու շեկ ժայռից բխած գիհի,
Երկինք միտող տաճար ու վանք և խորություն
անհուն վիհի,
Համբերություն որձաքարի. և կայծակի դու շառաչյուն,
Դու նորածին հուրհեր մանուկ և հերոսի դեռ
տաք աճյուն,
Եվ քանի դեռ սուր են խրում քո սրտի մեջ ու քո վերքի,
Քո շուրթերին թող չլռի՛ վրիժառու տողն այս երգի
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ
1992թ. մայիսի 9

Доводить высокое искусство до масс – святое дело

Из всех факторов развития личности не менее важным считается искусство музыки. Таковым оно было и в седой древности, и на всем протяжении становления человеческого общества как естественная необходимость, жизненная потребность выражения эмоций, настроения. Подобно первобытному человеку, вышедшему из пещеры и дошедшему до высокой цивилизации, так и мелодия, родившаяся в устах матери у колыбели, достигла невероятного совершенства творческого и исполнительского мастерства. Уроки музыки в детсадах, школах и музыкальных училищах безусловно способствовали выявлению способностей и открывали путь к мечте – в консерваторию.



Правление Всесоюзного общества "Знание" выражает свою глубокую благодарность за подготовку и проведение этого замечательного мероприятия в Москве Вам лично, Карен Серопович, а также отделу пропаганды ЦК Компартии Армении и правлению общества "Знание" Армянской ССР в лице тт.Ассатряна Г.Е., Енгибаряна Р.В., Овсепяна А.А., Калашяна Л.Х., Григорян Э.С.

Первый заместитель председателя Правления Н.К.Головко

Ереванская государственная консерватория им. Комитаса… Ей 100 лет. 100 выпусков. 100 лет открыты ее двери, а стены пропитаны голосами и звуками музыкальных инструментов. Каждый выпуск знаменовался талантами, светилами, которые обретали достойную известность не только на родине, но и за ее пределами, по всему миру принимали участие в престижных конкурсах. Конечно, заслуги 100–летней деятельности ЕГК широко и достойно представлялись и систематически представляются многими информационными каналами и, в первую очередь, издательским отделом консерватории. На страницах журнала "Музыкальная Армения" и газеты "Еражишт" постоянно освещаются актуальные вопросы творческой и преподавательской деятельности, проблемы и успехи студенчества и тех, кто только вступает на музыкальную тропу своей мечты, о незабвенных и ныне здравствующих, о нашей стране и многом другом.

Я хочу представить Ереванскую государственную консерваторию в другом ракурсе, о котором, возможно не многим известно. Это тесное сотрудничество ее с научно–методической секцией (НМС) по распространению и разъяснению музыкального творчества широким массам при Республиканском правлении общества "Знание". Многогранна была эта совместная деятельность. Члены НМС – преподаватели консерватории, музыковеды с навыком выступлений среди различных категорий масс. Охват вопросов был широк, включал весьма ответственные задачи и утверждался на Президиуме общества. Это составление дифференцированной тематики лекций, циклов лекций, рецензирование текстов и брошюр "В помощь лектору", план по охвату городов, сел и деревень, отчеты о проделанной работе в свете "Решений" и "Постановлений" для рассмотрения на Президиуме, на которых неизменно присутствовал Почетный председатель общества, академик Виктор Амбарцумян. О деятельности НМС по разным аспектам силами членов НМС делались доклады на симпозиумах, конференциях, проводились обмены опытом в разных городах страны. Вся эта трудоемкая полезная работа выполнялась… Да! – именно преподавателями–музыковедами, композиторами Ереванской государственной консерватории им. Комитаса – членами научно–методической секции общества "Знание". Руководителем НМС была Маргарит Брутян. Она удачно компенсировала свои поездки в отдаленные села со сбором и пополнением своего банка старинными песнями. Маргарита Арутюнян строго рецензировала тексты лекций, особенно брошюр "В помощь лектору". Ирина Тигранова вынесла "Филармонию школьника" на периферию, чем доставила огромную радость не только школьникам, но и их родителям. Анна Барсамян проводила беседы с молодежью на предприятиях городов. Цовак Амбарцумян проводил беседы в музее Спендиарова, где демонстрировал наглядные пособия – экспонаты музея. Эдуард Багдасарян доводил до слушателя суть романсов и неизменно, по просьбе аудитории, сам же исполнял их. Эдвард Мирзоян, Газарос Сарьян и Александр Арутюнян выступали на встречах со спецконтингентом. Все они незабвенные. А ныне здравствующим Давиду Казаряну и Армену Будагяну долго здравствовать! Они всегда востребованы.

Часто лекции, циклы лекций, особенно "встречи" сопровождались исполнениями, и тогда приглашались лучшие – Лусине Закарян, Бела Дарбинян, Раиса Мкртчян, Рубен Агаронян, Айрик Мурадян и даже ансамбль под руководством Маро Мурадян. Ну и многие другие.

Тандем "Знание" – консерватория, их совместная успешная работа приносила нужные плоды в понимании нюансов от народного творчества до высокого искусства современной музыки и охвата широких масс – от городского контингента до масс глубинки, до самых маленьких сел и деревень среди скалистых гор Армении.

6

Доводить высокое искусство до масс – святое дело

5

Тематика лекций охватывала широкий аспект жанров – от народного творчества до симфонии и по запросу аудитории. Особая аудитория – это молодежь. Они предпочитали “встречи”. Не могу не рассказать вкратце об одной из них.

Выпускник 14–ой тбилисской средней школы Эдуард Едикиселов поступил в московский вуз, окончив который стал инженером, специалистом набирающего силу нового направления – вычислительной техники.

Сколько шагов от ВЦ до TV?

Путь Эдуарда Едикиселова от ВЦ до TV был несколько неожиданным, но все же предсказуемым. А произошло это, когда молодой главный инженер вычислительного центра Норильского горно–металлургического комбината (вот куда его забросила судьба!) с группой таких же молодых энтузиастов организовал любительский телецентр и 31 декабря 1960 года в эфир пошла первая передача самого северного телевидения в мире. Поистине титаническая работа завершилась успехом, ведь сами ребята собирали аппаратную и студийный блок, одновременно были и редакторами, и режиссерами, и операторами, и звукорежиссерами. Эдуард Едикиселов сам додумался до приема, известного среди специалистов как рирпроекция. Когда выпускались новостные блоки, ведущие уже сидели на фоне проецируемых видов города или цехов комбината. Особой популярностью пользовался общий план Гвардейской площади Норильска, созданной по проекту армянского архитектора Михаила Мазманяна, сосланного сюда в роковом 1937 году.

Вскоре студия вошла в состав Гостелерадио СССР. Так Эдуард Едикиселов стал телевизионщиком. По заказу ЦТ он снял документальные фильмы о школе юных космонавтов, пребывании в Норильске известных чешских автоинженеров Ярослава Зикмунда и Иржи Ганзелки, совершавших кругосветку на машине "Татра". В ту пору Эдуард Едикиселов вел съемки даже на станции Северный полюс —12. Есть чем гордиться! Итогом стал фильм "Белое безмолвие".

После рождения дочери Карине он был вынужден переехать на юг и был переведен на работу в Волгоград. Уезжал из северного города, оставив о себе добрую намять. Телестудия, эстрадный оркестр при Доме культуры металлургов, музыка к спектаклям Норильского драмгеагра, куранты на городских часах, исполняющие мелодию из им же сочиненной "Песни о Норильске".

А в Волгограде были сняты его первые короткометражные телевизионные художественные фильмы "Скрипка Страдивари", "Стеклянная дверь", а также документальные, в числе которых "Кавказская пленница. Хроника съемок".

10

СЦЕНАРИСТ, РЕЖИССЕР, ОПЕРАТОР

9

Ни дня без кадра

И вот уже более трех десятилетий он живет и работает в Ереване, куда переехал по приглашению председателя Госкомитета Армении по телевидению Степана Погосяна. За это время режиссер–постановщик и автор сценариев Эдуард Едикиселов выпустил под псевдонимом "Эд. Асин" немало документальных и музыкальных телефильмов, в том числе и полнометражных. Это он снял "Хронику милосердия" – серию благотворительных концертов всемирно известных исполнителей в помощь пострадавшим в Спитакском землетрясении. А фильм–опера "Именины", поставленный А. Меликсетяном и Д. Заляном по одноименной кантате Ф.Зюсмайера, был удостоен приза на Международном фестивале детских телевизионных фильмов "Пост Монтрэ". Фильм снимался в самое тяжелое для Армении время, когда исполнители–дети в пальто и при свечах учили партии. Картину отсняли на базе студии "Грузия–фильм" всего за четыре съемочных дня.

Уже после закрытия ЦТ в 1996 году Эдуард Едикиселов снял в Ереване фильм "Памяти друга", посвященный известному художнику и первому мультипликатору Армении Валентину Подпомогову. В 2005 году Эдуард Едикиселов, являясь автором сценария и режиссером–постановщиком, закончил двухсерийный документальный музыкальный фильм–монографию "Пять встреч с Гегамом Григоряном".

В настоящее время Эдуард Едикиселов работает режиссером–оператором в Национальном театре оперы и балета им. А. Спендиаряна и как всегда полон свежих и оригинальных идей. Заканчивает работу над сценарием мюзикла "Встреча". А вот телевизионный проект "Вестник армянской культуры" был закрыт.

Идея – хорошая, но где – спонсор? – грустно заметил автор проекта.

Но тут же воодушевился, когда речь пошла о деятельности Международного клуба тбилисцев (МКТ) и Обществе культурных связей "Армения – Грузия", которые он возглавляет уже не первый год. К слову, о МКТ "ГА" уже рассказывал на своих страницах, так что нет нужды повторяться.

Вернемся к телевидению, которое ворвалось в его биографию и стало смыслом жизни не только режиссера–юбиляра, но и членов его семьи, и героев его телефильмов.

Да, когда–то его невеста отказалась уехать с ним на далекий север. Но именно телевидение сосватало его. Находясь в командировке в Харькове, Эдуард Едикиселов с друзьями в гостиничном номере смотрел местную передачу, и ему очень пришлась по сердцу ведущая Марианелла Чумаченко. Он нашел ее, сделал предложение, и они вместе уехали в Норильск. Дочь Карине – руководитель турфирмы в Москве, там же директором программ на телекомпании "МБ – групп" работает внук Сергей.

А теперь другая, тоже в своем роде замечательная история, поведанная Эдуардом Едикиселовым.

Мы снимали фильм–оперу "Ануш", где главные роли исполняли студенты консерватории Цовинар Мнацаканян (Ануш) и Саша Варданян (Саро). В процессе съемок они полюбили друг друга, и все закончилось веселой свадьбой. А на днях они женили сына.

Слушая рассказ Эдуарда Едикиселова, я мысленно представила дом на улице Мерквиладзе, его двор, где рос "Асин сын". Дом, над аркой которого находилась их квартира. Дом, где жила семья моего дяди, его дочери – Мадлена и Талико – сверстницы и друзья детства Эдуарда Едикиселова. И этот поразительный для нас обоих факт выяснился не так давно, совершенно случайно. В итоге – мне на память фотография, где запечатлена вся их "компания" юных тбилисцев.

С днем рождения, Эдик! Горячие поздравления юбиляру Эдуарду Христофоровичу!

ИДА КАРАПЕТЯН
//Тбилиссцы, 11, 2007

"ТАК ПУСТЬ ЗВЕЗДА ТЕБЕ СИЯЕТ..."

Это строка из лирического поздравления от Волгоградского телевидения кинорежиссеру и сценаристу Эдуарду Христофоровичу Едикиселову на его 80– летие, которое он отмечал недавно. И сколько искренних, теплых писем и телеграмм получил он в день своего юбилея! Из самых разных городов! Тех, что стали "вехами" его яркого жизненного пути, полного трудов и вдохновений.

Президента Международного клуба тбилисцев Эдуарда Едикиселова первым делом, конечно, поздравили друзья детства из дворика по адресу Мерквиладзе, 31, где провел юные годы он, Эдик, сын Аси (Эд. Асин — его псевдоним).

В Тбилиси он окончил школу и музыкальное училище и уехал в Москву.

Думаете, Эдуард Едикиселов там продолжил музыкальное образование? Он стал "технарем", работал в Минцветмеге, потом оказался в Норильске, на горно–металлургическом комбинате. И однажды у Эдуарда Едикиселова и молодых техников, его друзей родилась замечательная идея – создать местный телецентр. Месяцы упорного труда, и наконец 31 декабря 1961 года состоялась первая передача. В Норильске, на полярной широте, появилось "самое северное" телевидение. И один из первых фильмов был снят на станции "Северный полюс – 12". Норильскому ТВ уже полвека, но норильчане не забывают и всегда на связи с энтузиастом, который стоял у истоков его создания. И величают его не иначе, как "Почетным норильчанином".

Затем в биографии Эдуарда Едикиселова появилась новая географическая "точка". Он режиссер музыкальных программ на ЦТ Волгоградского ТВ. Одновременно снимает фильмы самых разных жанров. В их числе и документальный цикл "Фильм о фильме". В его рамках были сняты киноленты, рассказывающие о съемках картин "Они сражались за Родину" С. Бондарчука и "Кавказская пленница" Л. Гайдая. Ну, а на съемочной площадке всякое случается, вот и "по стечению обстоятельств", когда снимали один из эпизодов фильма "Кавказская пленница", сам Эдуард Едикиселов оказался в кадре, в том самом эпизоде с внушительного размера шприцем...

И снова поворот в жизни и судьбе Эдуарда Едикиселова. С 1975 года его ПМЖ (постоянное место жительства) – Ереван, место работы – режиссер и редактор музыкальных программ Армянского телевидения для ЦТ. Сколько воды утекло с той поры, а сколько за это время сделано на телевидении и в кино! В его творческой "копилке" документальные фильмы–портреты великих композиторов современности А. Арутюняна, А. Тертеряна, А. Экимяна, о первом армянском мультипликаторе В. Подпомогове, двухсерийная лента "Пять встреч с Гегамом Григоряном" – всемирно известном оперном певце, фильмы–оперы, фильмы–балеты. И все они отличаются оригинальностью и новаторской режиссурой. Но и это еще не все. По признанию председателя Союза кинематографистов Армении, народного артиста РА Р. Геворкянца, "фильм "Хроника милосердия" о благотворительном концерте мастеров искусств СССР в разрушенном землетрясением Ленинакане невозможно было смотреть без слез".

Сфера деятельности Эдуарда Едикиселова широка и многогранна. Он председатель Общества культурных связей "Армения – Грузия" и президент Международного клуба тбилисцев. Человек с неисчерпаемой энергией, он на все находит время и силы.

К своему юбилею Эдуард Христофорович сделал прекрасный подарок себе и всем нам. Это новый полнометражный документальный фильм "Тбилисский армянский театр – вчера, сегодня... и всегда", посвященный 155–летию театра. Высокую оценку дал новой работе режиссера театровед Левон Мутафян: "Впервые создан документальный фильм о тбилисском армянском театре, в котором мы видим широкую историческую панораму, дающую нам обширные знания о неком театральном мире, существовавшем в старом Тифлисе. Традиции этого мира продолжаются и по сей день, уже отображаясь в творчестве Государственного армянского театра. Автор сценария и режиссер Эдуард Едикиселов, используя все навыки документального кино и своеобразие повествования, заставляет зрителя увидеть связь времен, познакомиться с творчеством великих мастеров этого театра, одновременно увидеть современные творческие поиски художественного руководителя театра Армена Баяндуряна.

Фильм значителен и тем, что в нем звучат оценки и мнения как театральных критиков, так и наших замечательных режиссеров Ерванда Казанчяна и Ваге Шахвердяна".

"Энциклопедический, нужный, хороший..."

Такую оценку дал фильму худсовет Государственной студии документальных фильмов "Айк". Об истории создания картины в беседе с Эдуардом Христофоровичем Едикиселовым.

Как вам пришла мысль снять фильм о тбилисском армянском театре?

Ну, начну с того, что я тбилисец до мозга костей и люблю этот город моей юности со всеми его театрами, кинотеатрами, парками и концертными залами, тбилисскими дворами, серными банями, ботаническим садом и Дворцом пионеров и, главное, его людьми с их теплотой и человеколюбивыми традициями. И когда я стал режиссером, моей заветной мечтой и долгом стало желание создать об этом фильм. Что касается театра. Хотя я учился в русской школе, но не пропускал ни одной премьеры армянского театра, т.к. зав. музыкальной театра композитор Никита Мкртчян был другом моих родителей и всегда приносил контрамарки – тогда так назывались пригласительные билеты.

А снимать фильм я решил только в 2007 году, когда театр отмечал свое 150–летие. Представляете, Армянскому театру в столице Грузии Тбилиси 150 лет!

И с чего вы начали?

С изучения истории. Истории города и истории театра. И, как принято, с творческой заявки на фильм. Моим желанием было снять этот фильм совместно с грузинскими коллегами – я, ведь, председатель Общества культурных связей "Армения – Грузия" АОКСа. Я подал заявку в Министерство культуры Армении и одновременно обратился с этим предложением в новосозданный в Грузии Первый Информационный Канал (ПИК). К сожалению, сотрудничества с ними не получилось. И в прошлом году фильм был запущен на Государственной студии документальных фильмов "Айк".

Какие трудности были при работе над фильмом?

Самое главное – отсутствие хроникальных киноматериалов о тбилисском армянском театре в госархивах и Грузии, и Армении, да и в театральном архиве были одни любительские съемки.

А как проходили ваши съемки?

Снимали мы всего 10 дней. Хочу подчеркнуть, что мне повезло с группой в лице оператора Мкртыча Хачатряна (он же ассистент оператора), директора Арсена Гаспаряна (он же ассистент, помреж и администратор). Не могу не включить в состав съемочной группы директора и художественного руководителя тбилисского театра, депутата парламента Грузии Армена Баяндуряна (он же водитель), режиссера театра Левона Узуняна и заведующего архивом театра Луизу Хачатурян (она же помреж), не говоря о монтажере Артуре Парсяне (он же звукооператор). Всем им огромное спасибо за отличное выполнение своих многочисленных обязанностей.

Неужели не было никаких срывов?

Срывов не было, но не обошлось без досадных накладок. Только в Ереване, при просмотре на большом экране отснятых материалов, мы увидели, что у ведущего Пепо поверх черного архалуха на всех кадрах болтается черный микрофонный кабель!

И как вы его убрали?

Просто пришлось мне по горячим следам еще раз побывать в Тбилиси и переснять все эпизоды с ведущим, за что хочу поблагодарить тбилисского оператора Гарика Тонояна за его бескорыстную помощь. Как бы то ни было, фильм вышел. А о результатах пусть говорят зрители.

Несколько слов о творческих планах...

Я еще не отказался от идеи создания видеоэнциклопедии "Армяне", которую вынашивал более 25–ти лет. О фильме о Тбилиси середины XX века я уже говорил и даже придумал название – "Наш тбилисский двор". И еще. Думаю о приближающемся 100–летии Геноцида армян в Османской империи. Это мой долг перед мамой, пережившей эту трагедию. Тем более, что я – Эд. Асин.

АННА АРУТЮНЯН

Բարությունը կփրկի աշխարհը

Էդուարդ Եդիկիսելով՝ սցենարիստ, ռեժիսոր: Ծնվել է Թբիլիսիում՝ 1932թ.-ին: Դպրոցին զուգահեռ սովորել է երաժշտական դպրոցում՝ ջութակի դասարանում, նվագել է Թբիլիսիի երաժշտական կոմեդիայի թատրոնի նվագախմբում: Ավարտել է Մոսկվայի ֆինանսների ինստիտուտը: Այնուհետև, մեկնել է հյուսիս՝ Կրասնոյարսկ, 1960 թ. հիմնել է Նորիլսկի հեռուստատեսությունը, որն աշխարհի ամենահյուսիսային հեռուստատեսությունն է: 1965 թ., որպես բարձրակարգ ռեժիսոր, տեղափոխվել է Վոլգոգրադ:

1975-ին Հայաստանի հեռուստապետկոմի նախագահ Ստեփան Պողոսյանի հրավերով նա եկել է Երևան:

Երկու տասնյակից ավելի երաժշտական, վավերագրական. գեղարվեստական ֆիլմերի հեղինակ է՝ «Ալեքսանդր Հարությունյան՝ վրձնահարված դիմանկարին», «Երեք մենախոսություն երաժշտության մասին», «Հինգ հանդիպում Գեղամ Գրիգորյանի հետ» և այլն:

Եդիկիսելովը ղեկավարում է Մշակութային կապերի հայկական ընկերության «Հայաստան-Վրաստան» միությունը, Թբիլիսցիների միջազգային ակումբի նախագահն է, հայկական տեխնոլոգիական ակադեմիայի ակադեմիկոս:

Ծննդյան 75-ամյակի կապակցությամբ մշակույթի ոլորտում ունեցած ներդրումի համար պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով:

Եզակի ազգանուն՝ Եդիկիսելով

Իրականում սա հայկական ազգանուն է: Հայրս ծնվել է Նոր Նախիջևանում: Հայ առաքելական եկեղեցու գրքում գրանցված է որպես Եդիկիսելյան Խաչերես: Նա ռազմական կրթություն է ստացել Պետերբուրգում, որտեղ էլ փոխել են անուն-ազգանունը, և նա դարձել է Քրիստափոր Եդիկիսելով:

Ժառանգություն

Դեռ մանկությունից ծնողներս ինձ պատրաստել էին երաժշտական կարիերայի համար: Մայրս՝ Աստղիկ Մխիթարյանը, երգչուհի էր, Նոր Նախիջևանի Եկեղեցական երգչախմբի մեներգչուհին էր, երգում էր հին հայկական ժողովրդական երգեր, հայկական և ռուսական ռոմանսներ, հանդես էր գալիս սիրողական օպերային ներկայացումներում: Երգել է նաև աշխարհահռչակ Ֆյոդոր Շալյապինի հետ Ռոստովի Կամերային թատրոնի բեմում՝ Վերդիի «Օթելլոյում» կատարելով Դեզդեմոնայի դերերգը: Դա Շալյապինի՝ Ռոստովում ունեցած հյուրախաղերի ժամանակ էր:

Թբիլիսիի 14-րդ արական դպրոցն ավարտելուց հետո սովորել եմ Փալիաշվիլու անվան երաժշտական ուսումնարանի ջութակի բաժնում, թեև հավասարապես նվագել եմ նաև դաշնամուր, կիթառ, ակկորդեոն: Ուսման տարիներին աշխատում էի Թբիլիսիի երաժշտական կոմեդիայի թատրոնում: Դեռևս դպրոցում ղեկավարում էի էստրադային նվագախումբը, բուհում սովորելիս՝ նույնպես: Բայց չգնացի կոնսերվատորիա, այլ դարձա ինժեներ:

Մեկնեցի Մոսկվա, ընդունվեցի ֆինանսական ինստիտուտի հաշվիչ մեքենաների ֆակուլտետ; Ինստիտուտն ավարտելուց հետո Մոսկվայում որոշ ժամանակ աշխատեցի գունավոր մետալուրգիայի նախագծային ինստուտուտում որպես ինժեներ:

Աշխարհի ամենահյուսիսային հեռուստատեսությունը

1957-ին ինձ հրավիրեցին Նորիլսկի լեռնամետալուրգիական կոմբինատ՝ որպես հաշվողական կենտրոնի տեխնիկական ղեկավար: Այստեղ մի խումբ երիտասարդների հետ ստեղծեցինք սիրողական հեռուստակենտրոն: Հինգ հոգի էինք, և ամբողջ աշխատանքն ինքներս էինք կատարում՝ և խմբագիր էինք, և ռեժիսոր, և օպերատոր: Երեք տարի անց՝ 1960 թ., հունվարի 31-ին, եթեր հեռարձակեցինք աշխարհի ամենահյուսիսային հեռուսուտակայանի առաջին հեռուստահաղորդումը:

Երբ Նորիլսկ ժամանեց այդ տարիների ԽՍՀՄ Հեռուստառադիոպետկոմի նախագահ Մեսյացևը, եղավ ստուդիայում, դիտեց մեր հաղորդումները և բարձր գնահատեց կատարված աշխատանքը, նրա առաջարկությամբ Նորիլսկի ստուդիան ընդգրկվեց պետական կոմիտեի կազմում: Ես էլ սկսեցի աշխատել հեռուստատեսությունում:

Այսպես սկսվեց իմ հեռուստատեսային գործունեությունը:

Սակայն երաժշտությունն ինձ չի լքել այդ տարիների ընթացքում: Նորիլսկում ղեկավարել եմ Վ. Մայակովսկու անվան դրամատիկական թատրոնի երաժշտական մասը: Ստեղծեցի էստրադային՝ արդեն պրոֆեսիոնալ նվագախումբ: Գրեցի երգ՝ նվիրված Նորիլսկ քաղաքին, որը հաղթեց մրցույթում: Մի քանի թատերաշրջան ձևավորում էի Անդրբևեռի դրամատիկական թատրոնի ներկայացումները: Իսկ երբ արդեն մեր ուժերով հավաքեցինք հեռուստակենտրոն և այն ընդունեցին Հեռուստառադիոպետկոմի կազմ, կուսակցության քաղկոմի որոշումով ինձ տեղափոխեցին հեռուստատեսություն, որտեղ նույնպես ղեկավարում էի ստուդիայի նվագախումբը: Հետո հեռակա ավարտեցի Լենինգրադի թատրոնի, երաժշտության և կինեմատոգրաֆիայի ինստիտուտը և դարձա ռեժիսոր ու մինչև օրս էլ աշխատում եմ:

«Կովկասի գերուհին»

Դա ստացվեց միանգամայն պատահաբար. Կենտրոնական հեռուստատեսության համար ֆիլմ էինք նկարահանում «Կովկասի գերուհին» ֆիլմի ստեղծագործական կոլեկտիվի մասին: Նկարահանվում էր այն հատվածը, երբ ամառանոցում հերոսներին սրսկում են դաբաղի դեմ, և պարզվեց. որ բժշկի դերակատարը ինքն էր հիվանդացել: Լեոնիդ Գայդայն էլ խնդրեց փոխարինել նրան, մանավանդ, որ դեմքս դիմակով պետք է լիներ: Այնպես որ այդ դրվագում երևում են հենց իմ աչքերը: Հետո ասացին, որ լավ եմ խաղացել դերս:

Հայրենիքում

Հայաստան եկա 1975-ին՝ Հայաստանի հեռուստապետկոմի նախագահ Ստեփան Պողոսյանի հրավերով, ու մնացի այստեղ: Մինչ այդ՝ 1965 թ.աշխատում էի Վոլգոգրադի հեռուստատեսությունում, ԽՍՀԱ կենտրոնական հեռուստատեսության համար տրվող հաղորդումների ռեժիսորն էի: Հայաստանում Կենտրոնական հեռուստատեսության համար տրվող երաժշտական ծրագրերի ռեժիսորն էի: Ստեղծեցի մեծ թվով երաժշտական հաղորդումներ, հեռուստածրագրեր, ֆիլմեր, որոնք հեռարձակվում էին Կենտրոնական հեռուստատեսության համար Երևանում նկարահանեցի հեռուստատեսային ֆիլմ-օպերաներ՝ Ա. Տիգրանյանի «Անուշը» և «Դավիթ Բեկը», Տ. Չուխաջյանի «Կարինեն», Վ. Բալյանի «Ամբոխները խելագարված», Ժ. Բիզեի «Պատանեկան սիմֆոնիա» բալետները, «Ալեքսանդր Հարությունյան», «Ալեքսեյ Հեքիմյան». «Երգում է էլվիրա Ուզունյանը», «Էլվինա Մակարյանի երգերը», «Հինգ հանդիպում Գեղամ Գրիգորյանի հետ» կինոնկարները:

Ստեղծագործական ժառանգություն

Ընդհանուր առմամբ նկարահանել եմ երկու տասնյակից ավելի երաժշտական, վավերագրական և գեղարվեստական ֆիլմ: Առաջին վավերագրական ֆիլմերս կապված են հյուսիսի հետ և նկարահանվել են Նորիլսկի հեռուստատեսությունում՝ «Սպիտակ լռություն», «Հյուսիսային բևեռ-12»՝ բևեռային կայանի աշխատանքների մասին, «Շաբաթ հինգ տարուց»՝ չեխ ճանապարհորդներ Զիգմունդի և Գանզելկայի մասին, «Տիեզերքի ճանապարհին» պատանի տիեզերագնացների դպրոցի մասին: Հետո կենտրոնական հեռուստատեսության համար նկարահանեցի «Ֆիլմ՝ ֆիլմի մասին»՝ Սերգեյ Բոնդարչուկի «Նրանք մարտնչում էին հանուն հայրենիքի» ֆիլմի նկարահանումների մասին:

Գեղարվեստական կարճաժետրաժ ֆիլմերս են՝ «Ստրադիվարիուսի ջութակը», «Ապակե դուռ», իսկ երաժշտական ֆիլմերը՝ «Բալլադ», «Երգում է Սոֆիա Ռոտարուն», «Սիրո երգեր», «Ալեքսանդր Հարությունյան», «Ալեքսեյ Հեքիմյան», հեռուստաֆիլմ-օպերաներ «Անուշ», «Ամուսնական պարտամուրհակ», «Անվանակոչություն»:

«Հինգ հանդիպում Գեղամ Գրիգորյանի հետ»

Գեղամին սկսել եմ նկարահանել նրա ստեղծագործական գործունեության հենց սկզբից: Դեռ խորհրդային տարիներին Կենտրոնական հեռուստատեսությամբ հաղորդաշար կար «Օպերային թատրոնի երիտասարդ ձայները», որի մշտական հյուրն էր Գեղամ Գրիգորյանը: Նրան ես նկարահանել եմ նաև հետո՝ և որպես միջազգային տարբեր մրցույթների դափնեկիր և որպես Լա-Սկալա թատրոնի ստաժոր, և որպես Վիլնյուսի օպերային թատրոնի մեներգիչ:

2005 թ. ավարտեցի նրա մասին պատմող երկմասանոց՝ «Հինգ հանդիպում Գեղամ Գրիգորյանի հետ» վավերագրական. երաժշտական ֆիլմը:

«Բարությունը կփրկի աշխարհը»

1988թվականին էր, երբ Գյումրիում նկարահանում էինք «Գթասրտության խրոնիկա» ֆիլմը: Այդ ֆիլմը պատմում է Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնելու համար անվանի կատարողների համերգաշարերի մասին: Հայաստանի համար այդ ողբերգական օրերին Գյումրիում ելույթ էին ունենում Վլադիմիր Սպիվակովը, Ալլա Դեմիդովան, Ելենա Օբրազցովան, Զուրաբ Սոտկիլավան, Մարգարիտա Տերեխովան: Եվ այդ ժամանակ էր, որ մտածեցի բեմում մի վահանակ կախել «Բարությունը կփրկի աշխարհը» գրությամբ: Եվ դա յուրօրինակ նշանաբան դարձավ, որովհետև արդիական է և այսօր, և միշտ: Պետք է բարությամբ վերաբերվել կյանքին, մարդկանց, կյանքն այնքան կարճ է:

Այդ դժվար տարիների ծնունդն է իմ «Անվանակոչություն» ֆիլմ-օպերան, որի ստեղծման համար երեխաները պարտիաները սովորում էին վերարկուով՝ մոմի լույսի տակ: Ֆիլմն արժանացավ միջազգային «Պոստ մոնտրե» հեռուստատեսային ֆիլմերի փառատոնի մրցանակին:

Թբիլիսցիների միջազգային ակումբ

Տասներկու տարի առաջ Երևանում հիմնեցի Թբիլիսցիների միջագգային ակումբը: Թբիլիսին միշտ աչքի է ընկել իր բազմազգ բնակչությամբ, կոլորիտով, ավանդույթներով: Շատ թբիլիսցիներ այսօր ապրում են նախկին Միության տարբեր քաղաքներում, արտասահմանում, և իմ նպատակը նրանց համախմբելը, միավորելն է, որպեսզի շարունակվեն հին Թբիլիսիի գեղեցիկ ավանդույթները: Մասնաճյուղեր ունենք նաև Մոսկվայում, Սիմֆերոպոլում, ԱՄՆ-ում:

Ինչպես գիտենք, Թբիլիսիի հին բակերում ապրում էին տարբեր ազգերի, աշխարհայացքի տեր մարդիկ, և ապրում էին համերաշխ, սիրով, մեկ ընտանիքի պես:

Եվ մենք մեր միջոցառումների, հանդիպումների միջոցով փորձում ենք ստեղծել թբիլիսյան այդ մթնոլորտը երևանյան ակումբում:

Ունենք երաժշտական խումբ՝ «Դևչատա», «Նաիրի» թատերախումբ, որի ղեկավարն էր Վրաստանի վաստակավոր արտիստուհի Սեդա Ջանիկյանը: Կազմակերպում ենք էքսկուրսիաներ Հայաստանով: Մեր մշակութային, ճանաչողական ծրագրերով փորձում ենք սերտացնել Հայաստան-Վրաստան կապերը, օգնում ենք նախկին թբիլիսցիներին չխզել կապը իրենց ծննդավայրի հետ: Ամեն տարի այցելում ենք Թբիլիսի մտերիմներին, նաև Վարդատոնին և քաղաքի տոնին՝ Թբիլիսոբային: Ունենք «Գթասրտություն» հիմնադրամ, որի միջոցով օգնում ենք օգնության կարիք ունեցող մեր ակումբի անդամներին, ֆոնդի ղեկավարն է Սվետլանա Մանթաշևան: Ունենք թերթ՝ «Թբիլիսցիներ»:

Զորի Բալայանը մեր ակումբի պատվավոր անդամ է, և երբ «Կիլիկիա» նավը դուրս եկավ յոթ ծովերով շրջագայության, մենք Բաթումիից ուղեկցեցինք նրանց:

Երջանիկ եմ...

Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում: Ես սիրում եմ իմ աշխատանքը, որովհետև այն ինձ հնարավորություն է տալիս հանդիպել ոգով ինձ մոտ մարդկանց հետ:

Հաճախ եմ հանդիպել, ստեղծագործական շփումներ ունեցել արվեստի մեծերի հետ՝ Վիլյամ Սարոյան, Արամ Խաչատրյան, Դմիտրի Շոստակովիչ, Դմիտրի Կաբալևսկի, Միքայել Թարիվերդիև, Օսկար Ֆելցման, Գոհար Գասպարյան, Էդուարդ Միրզոյան, Յան Ֆրենկել, Վլադիմիր Վիսոցկի, Սվյատոսլավ Բելզա:

Ինձ համար շատ նշանակալի էր հանդիպումը Վադիմ Կոզինի հետ, նա ինձ նվիրեց իր ռոմանսների ձայնագրությունները: Իսկ հանդիպելով տիեզերագնաց Գեորգի Բերեգովոյի հետ՝ ես ձեռք բերեցի լավ ընկեր:

Նկարահանելով Ալեքսանդր Հարությունյանի մասին ֆիլմ՝ հանդիպել եմ Շոստակովիչի, Խրենենիկովի, Կաբալևսկու հետ: «Մեկ անգամ Սևիլիայում» ֆիլմի համար Վլադիմիր Վիսոցկու ֆոտոփորձերն էի անում, ցավոք, ֆիլմը չնկարահանվեց:

Այժմ նկարահանում եմ լիամետրաժ փաստավավերագրական ֆիլմ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի մասին:

Իմ ստեղծագործությունը և մտերիմները իմ էներգիայի աղբյուրն են:

Երազանքս՝ «Հայեր» տեսահանրագիտարան

Վերջերս սկսեցի հեռուստատեսային նախագիծ՝ «Հայեր. մշակութային լրատու», որը եթեր էր հեռարձակվում «Կենտրոն» հեռուստաընկերությամբ, սակայն ֆինանսական պատճառներով շարունակություն չունեցավ: Շատ կցանկանայի շարունակել այդ նախագիծը:

Սակայն ամենամեծ երազանքս է կյանքի կոչել իմ նախագիծը' ստեղծել հեռուստատեսային «Հայեր» տեսահանրագիտարան՝ մշակույթի, գիտության, սպորտի և մյուս բնագավառների հայ մեծ գործիչների մասին, որպեսզի համաշխարհային հանրության մոտ Հայաստանի և հայի մասին իրական, ճիշտ պատկերացում ձևավորվի:

Սա շատ կարևոր է աշխարհի քաղաքակրթության մեջ հայկական ժառանգության արժևորման համար: Այս նախագիծը, ցավոք, ընթացք չի ստանում զուտ ֆինանսական պատճառով, սակայն ես հույս չեմ կորցնում, որ մի օր այդ կարևոր գործը կկարողանամ անել:

ԷԴՈՒԱՐԴ ԵԴԻԿԻՍԻԼՈՎ՝ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ,
նյութը պատրաստել է՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆԸ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

❖ Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի ասիստենտ **Նունե Արզումանյանը** 2022-ի ամռանը, Մեծ Բրիտանիայի *«Golden time talent»* առցանց միջազգային մրցույթում ավագ տարիքային խմբում հաղթել է կոմպոզիտորական անվանակարգում՝ ներկայացնելով «Աշնան լույս» էստրադային նվագախմբի համար գրված ստեղծագործությունը:

❖ Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի 2-րդ կուրսի ուսանող **Լիլյա Մեխակյանը** Լեհաստանի Ցեխոցինեկ քաղաքում կայացած *«Vistula Sounds»* վոկալ մրցույթի

«Միջազգային երգ» անվանակարգում արժանացել է երրորդ մրցանակի: Վկայագրի է արժանացել նաև Լ. Մեխակյանի դասախոսը՝ դոցենտ Լուսինե Կչոգյանը: Նշենք, որ *«Vistula Sounds»* մրցույթին մասնակցել է 15 երկրից 90 ներկայացուցիչ:

❖ Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի բակալավրական 3-րդ կուրսի ուսանող **Սաթենիկ Սահակյանը** (դասախոս՝ Մերի Կարապետյան) *«Baltic Voice»* 2022 երգիչների 10-րդ միջազգային մրցույթ-փառատոնում արժանացել է Բրոնզե *«Grand Prix»* մրցանակի:

«Երգն այն ուժն է, որը միավորում է բոլոր ժողովուրդներին» կարգախոսն ունեցող պատանի երգիչների մրցույթին մասնակցեցին 20 երկրից 126 ներկայացուցիչ:

❖ ԵՊԿ Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ևս մեկ սեմինար՝ նվիրված ժամանակակից երաժշտության խնդիրներին:

Մեր հյուրն էր Դնեպրոպետրովսկի երաժշտության ակադեմիայի դոցենտ Լարիսա Գոնտովայան: Իր մասնակցությամբ կավարժական ու գիտական գործունեության ընթացքում նա աշխատել է տարիքային ամենամեծ ընդգրկմամբ լսարանների հետ՝ տարրական դպրոցից մինչև կոնսերվատորիական ուսանողներ, ներգրավված է եղել սոցիալական տարբեր նախագծերում:

Լարիսա Գոնտովայայի համար հստակ է, որ արվեստը հատուկ նշանակություն ունի, այդ պատճառով այն պետք է անընդհատ ցույց տալ երիտասարդներին: Վստահ է, որ երաժշտությունն ուղեղը մարզելու հնարավորություն է տալիս, ինչպես օրինակ՝ լսողական խնդրին պատասխանելու կամ նոտային տեքստը կարդալու ժամանակ է կատարվում:

Հարգարժան դոցենտը նկարչության ու երաժշտության զուգահեռումների միջոցով անդրադարձավ մի քանի հարցերի՝ ինչո՞ւ է ճշմարտությունը թաքնված մեզանից, ի՞նչ է հաղորդում արվեստը, ի՞նչ է նշանակում պատասխանատվություն յուրաքաչյուր հնչյունի նկատմամբ, չէ՞ որ Հին քաղաքակրթությունները մեզ սովորեցնում էին պատասխանատու վերաբերմունք խոսքի, հնչյունի նկատմամբ:

Լարիսա Գոնտովայան համաձայն է, որ ժամանակակից երաժշտություն երգելու իսկական ցանկություն չկա, քանի որ այն բարդ է կատարել, լսել: Միանգամից տրվեց մի բանաձև, որ ժամանակակից երաժշտությունը մեր հայելին է, եթե նայենք այս դիրքից, կատարողների և ունկնդրի համար շատ ավելի հեշտ կլինի: Ժամանակակից երաժշությունը մեզ արթնանալու կոչ է անում, հիմա մենք այլ ենք, մեր լեզուն ուրիշ է: Սեմինարին ներկա ուսանողներին առաջարկեց համերգային երկացանկը կառուցել հակադրության վրա՝ ամեն անգամ ընդունված կլասիկայի կողքին կատարել նորը: Հիշելով XX դարի ավանգարդիստներին՝ պատգամեց. *«Պետք է անկեղծ հավատալ, որ արվեստը աշխարհը կփոխի»:*

Լարիսա Գոնտովայայի հետ հանդիպումները կլինեն շարունակելի:

Խմբագրական

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

📖 В 2022 году в издательстве “Амроц груп” вышел в свет сборник переводов на русский язык текстов армянских народных и ашугских песен и текстов армянских поэтов, стихи которых были положены на музыку армянскими композиторами разных поколений “Жемчужины армянской народной и авторской поэзии” музыковеда, фольклориста, кандидата искусствоведения, профессора ЕГК Алины Ашотовны Пахлеванян.

Большая часть переводов была опубликована в сборниках народных песен, в отдельных изданиях, содержащих обработки или переложения армянских народных песен: “Комитас. Песни в фортепианном переложении”, “Романос Меликян ”Изумруды” в переложении для фортепиано”, “Эдгар Оганесян. Хоры”, “А. Брутян. Крестьянские напевы. Книга 2”, ”Великая Отечественная война в армянских народных и гусанских песнях”, “М. Манукян. Народные песни Мартунинского района”, а также переводы для фольклорного концерта Армении в Москве (1986), авторские песни и переводы разных лет.

Переводы сделаны с целью ознакомить русскоязычного читателя и слушателя концертов армянской народной музыки с содержанием песен, с чувствами и мыслями армянского народа.

С. АЗНАУРЯН

📖 Վերջերս «Կոմիտաս» հրատարակչությունում լույս է տեսել Գրիգոր Հարությունյանի «Ստեղծող մանկանց: Հայ հոգևոր երգերի խմբերգային մշակումներ մանկական և կանանց երգչախմբերի համար» ժողովածուն: Այն ընդգրկում է խմբավար, մանկավարժ Գրիգոր Հարությունյանի կողմից կատարած հայ հոգևոր երաժշտության խմբերգային մշակումները՝ ա կապելլա և նվագակցությամբ:

Ժողովածուի «Ստեղծող մանկանց» անվանումը վերցված է Ս. Ներսես Շնորհալու «Բան հաւատոյ» պոեմից: Այն բացվում է Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանի «Գիր օրհնության» ուղերձով, որում նշվում է. *«Հոգևոր հայրերը, սաղմոսներից ներշնչված, ստեղծել են շարականներ և տաղեր, որոնց հիմքը սուրբգրյան տեքստերն են: Նրանք դարձել են մարդկային խոր ապրումների դրսևորման, դարձի և ապաշխարհության, կյանքի և մահվան, հավիտենական կյանքի վերաբերյալ երևույթների արծարծման հիմքը: Ունկնդրին այս երգերը սովորեցնում են ապրել՝ ապավինելով Աստծուն, ուսուցանում են զանազան իրավիճակներում և փորձությունների պահին ինչպես և ինչ խոսքերով աղոթել»:*

Փոքրիկ նախաբան կա նաև ժողովածուի մասնագիտական խմբագիր, կոմպոզիտոր Կոնստանտին Պետրոսյանի կողմից, ով բարձր գնահատական է տալիս Գ. Հարությունյանի կողմից կատարած աշխատանքին: Մասնավորապես նա նշում է. *«Գրիգոր Հարությունյանը շատ հմուտ մոտեցել է ամեն մի երկի բնագրին՝ պահպանելով նրա երաժշտական կազմվածքը և, որ կարևորն է, ամեն մի կտավի յուրահատուկ և բնորոշ ձայնային սանդղակը: Ներկայացված երկերից շատերը առաջին անգամ են բազմաձայնեցվել և ստացել իրենց ուրույն կերպարը: Տիրապետելով պոլիֆոնիկ և հոմոֆոնիկ շարադրանքներին՝ նա վարպետորեն և նուրբ ճաշակով մշակել է յուրաքանչյուր հոգևոր կոթողը՝ հարազատ մնալով տվյալ երկի երաժշտության բովանդակությանը և հոգուն»:*

Նախաբանում հեղինակը տալիս է հայ հոգևոր երաժշտության պատմության փոքրիկ ակնարկ և նշում է, որ ձեռնարկը մշակելիս հաշվի են առնվել հայ մոնոդիկ երաժշտության առանձնահատկությունները:

Ժողովածուն ամփոփում է Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Մովսես Խորենացու, Ստեփանոս Ա Սյունեցու, Անանիա Շիրակացու, Բարսեղ Ճոնի, Պետրոս Ա Գետադարձի, Ս. Ներսես Շնորհալու, ինչպես նաև միջնադարյան անհայտ հեղինակների (V-XII դարերին վերագրվող) 13 տաղ և շարական:

Ձեռնարկի վերջում Գ. Հարությունյանը տալիս է «Շարականների և տաղերի մեկնություններ» բաժինը, որի շնորհիվ ժողովածուն ձեռք է բերել ոչ միայն կիրառական և ուսումնական, այլ նաև գիտական նշանակություն: Այն նախատեսված է խմբավարների, ակադեմիական և սիրողական երգչախմբերի, երաժշտական ուսումնական հաստատությունների և երաժշտագետների համար:

Ա. ԱԹՈՅԱՆ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
© ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ,
© ԳՈՌԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՌԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (հայ. լեզու),
ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՌԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 25.11.2022: Տպագրված է՝ անհատույց բարեգործությամբ Գևորգ-Հրայր ՍՊԸ-ում:
Գինը 600 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի © «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/